ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«17» հուլիսի 2023 թվականի №270-Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 21-Ի №51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 3-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014 թվականի փետրվարի 10-ի №85-Ա որոշման 1-ին կետով հաստատված «Հայաստանի Հանրապետության մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի օրինակելի կանոնադրության» 7-րդ, 10-րդ, 12-րդ, կետերը, 24-րդ կետի 3-րդ ենթակետը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 22-ի թիվ 1818, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 22-ի թիվ 516 գրությունները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամներ Նազելի Բաղդասարյանի, Արեն Նահապետյանի և Մարտիրոս Դարբինյանի լիազորությունները:

2. Խորհրդի անհատական կազմում հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետ Մուշեղ Մուրադյանին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու կողմից առաջադրված Հայկ Կարախանյանին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի կողմից առաջադրված Էդգար Սաղաթելյանին և Հայաստանի Հանրապետության Շիրակի

մարզի Անի համայնքի ավագանու կողմից առաջադրված Արտակ Շաբոյանին՝ մինչև Խորհրդի լիազորությունների ժամկետի ավարտը:

3. Այդ կապակցությամբ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի մարտի 21-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին առընթեր երիտասարդական խորհուրդ ստեղծելու և խորհրդի կանոնադրությունը հաստատելու մասին» №51-Ա որոշման 1-ին կետով հաստատված №1 հավելվածի 1-ին կետում «Նազելի Բաղդասարյան» բառերը փոխարինել «Մուշեղ Մուրադյան» բառերով, 5-րդ կետում «Արեն Նահապետյան» բառերը փոխարինել «Հայկ Կարախանյան» բառերով, 6-րդ կետում «Մարտիրոս Դարբինյան» բառերը փոխարինել «Էդգար Սաղաթելյան» բառերով և «համայնքի ղեկավարի տեղակալ» բառերը՝ «համայնքի ղեկավարի առաջին տեղակալ» բառերով, իսկ 7-րդ կետից հետո լրացնել նոր 7.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«7.1. Արտակ Շաբոյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ոչ պետական հատվածը ներկայացնող խորհրդի անդամ»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝

Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է